



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-19245**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2020 թվականի հուլիսի 21-ի թիվ 84-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
Թիվ ԿԳ/69-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ԼՅՈՒՂՎԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Գայանե Դեմիրջյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի և Կարեն Սարգսյանի կազմով, քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի, քննության առնելով փաստաբան Գայանե Լյուդվիկյանին (արտոնագիր թիվ 1582) (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Հարություն Հովհաննիսյանի լիազորված անձ Սվետլանա Հովհաննիսյանը (**այսուհետ, նաև՝ Դիմող**) դիմելով Պալատ ըստ էության, հայտնել է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի և Հարություն Հովհաննիսյանի միջև 16.09.2014թ. կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը 17.12.2018թ. կնքված հանձման ընդունման ակտով լուծվել է: Վերոնշյալ ակտով Գայանե Լյուդվիկյանը պարտավորվել է վերադարձնել փաստացի չկատարված աշխատանքի դիմաց ստացած հոնորարը՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով, սակայն չի վերադարձրել:

Դիմողը խնդրել է պատասխանատվության ենթարկել փաստաբանին, իսկ դիմումին կից ներկայացրել է 13.05.2019թ. տրված լիազորագրի, 16.09.2014թ. կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագրի և 17.12.2018թ. կնքված հանձման ընդունման ակտի պատճենները:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 19.12.2019թ թիվ 511-Ա/ԿԳ-19245 որոշմամբ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության և Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների խախտման հատկանիշներով:

23.12.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին **(այսուհետ նաև՝ Նախապատրաստող)**:

### **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Դիմողը ներկայացել է կարգապահական նիստին և պնդել դիմումով իր ներկայացրած պահանջը:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

Պատասխանողը չի ներկայացել կարգապահական նիստին, սակայն ներկայացրել է դիմում, որով հայտնել է, որ նախորդիվ՝ Դիմողի մեկ այլ դիմումի հիման վրա Պալատի կողմից արդեն իսկ հարուցվել է կարգապահական վարույթ, որը կարճվել է և չի բողոքարկվել Դիմողի կողմից: Այնուհետև 21.11.2019թ.-ին Դիմողը կրկին դիմել է Պալատ ներկայացնելով նույնաբովանդակ դիմում, կրկին իր կողմից նույն խախտումը կատարելու վերաբերյալ, որի կապակցությամբ հարուցվել է Թիվ ԿԳ-19245 կարգապահական վարույթը: Հաշվի առնելով վերոգրյալը, Փաստաբանը միջնորդել է Օրենքի 39.8 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի հիմքով սույն կարգապահական վարույթը կարճել:

Միաժամանակ Փաստաբանը խնդրել է նշանակված կարգապահական նիստն անցկացնել իր բացակայությամբ:

#### **Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը հորհրդին.**

30.01.2020թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանը կազմել է եզրակացություն:

07.02.2020թ. գործը հանձնվել է հորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի է ունեցել 14.07.2020թ. ժամը՝ 19:30-ին և 21.07.2020թ. ժամը՝ 18:15-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

#### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Նոր Կանոնագրք**) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

**Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝**

- Դիմողի և Փաստաբանի միջև 16.09.2014թ. կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով փաստաբանը պարտավորվել է Դիմողին մատուցել իրավաբանական ծառայություններ: Սույն փաստը հաստատված է գործում առկա 16.09.2014թ. պայմանագրով:

- Դիմողի և Փաստաբանի միջև 17.12.2018թ. կնքվել է հանձնման ընդունման ակտ, որով լուծվել է վերոնշյալ պայմանագիրը և Գայանե Լյուդվիկյանը պարտավորվել է վերադարձնել փաստացի չկատարված աշխատանքի դիմաց ստացած հոնորարը՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով մինչև 2019թ. մարտի 2-ը: Սույն փաստը հաստատված է համարվում գործում առկա 17.12.2018թ. Ընդունման-հանձնման վերաբերյալ ակտով:

#### **6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ **Գայանե Լյուդվիկյանը** փաստաբան է հանդիսանում 25.12.2012թ., և 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ **2 անգամ** հարուցվել է կարգապահական վարույթ, որոնք կարճվել են:

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

*Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության պահանջների խախտման համար:*

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության խախտման մասով.**

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝

պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պարավիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Դիմողն ըստ էության հայտնել է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի հետ 16.09.2014թ. կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը 17.12.2018թ. կնքված հանձման ընդունման ակտի համաձայն լուծվել է, իսկ Գայանե Լյուդվիկյանը պարտավորվել է վերադարձնել փաստացի չկատարված աշխատանքի դիմաց ստացած հոնորարը՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով, սակայն չի վերադարձրել:

Դիմողի կողմից դիմումին կից ներկայացված 17.12.2018թ. կնքված հանձման ընդունման ակտի համաձայն՝ Հարություն Հովհաննիսյանի և փաստաբան Գայանե Լյուդվիկյանի միջև 16.09.2014թ. կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը համարվել է լուծված, իսկ փաստաբան Գայանե Լյուդվիկյանը պարտավորվել է 02.03.2019թ. վերադարձնել 400.000 ՀՀ դրամ:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին կանոնի վերլուծությունից բխում է, որ փաստաբանի մոտ վստահորդից կամ պատվիրատուից ստացված հոնորարի մասը վերադարձնելու պարտականությունն առաջանում է այն դեպքում, երբ՝ (1) լուծվել է իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը, (2) վերադարձման ենթակա գումարի դիմաց փաստաբանը փաստացի աշխատանք չի կատարել և (3) իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան, այսինքն՝ հոնորարի չվերադարձման պայման նախատեսված չէ:

Ելնելով վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից, համադրելով դրանք գործով հաստատված փաստերի հետ և հաշվի առնելով այն, որ սույն գործը քննելու օրվա դրությամբ փաստաբանը չի ապացուցել իր կողմից գումարը վերադարձնելու փաստը, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանը խախտել է Կանոնագրքի 3.8.5 ենթակետի առաջին պարբերությամբ սահմանված կանոնը՝ չվերադարձնելով հոնորարը:

**Նոր Կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պարասխանավության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապարասխան կետով կամ ենթակետով:**

**Նոր կանոնագրքի 3.8.4 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պարավիրատուին, կամ վստահորդի կամ պարավիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:**

**Փաստաբան Գայանե Լյուդվիկյանը վերոհիշյալ արարքը Նոր կանոնագրքի 3.8.4 ենթակետի իմաստով նույնպես խախտում է համարվում, հետևապես Գայանե Լյուդվիկյանի արարքը պետք է որակվի Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ Կանոնագրքի (2012թ.) 3.8.4 ենթակետով:**

➤ **Փաստաբանի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման մասով.**

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Խորհուրդը գտնում է, որ խախտելով Կանոնագրքի 3.8.5 ենթակետերի պահանջները՝ Պատասխանողը խախտել է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը, քանի որ վերջինս փաստաբանի վրա դրել է Կանոնագրքի պահանջները պահպանելու և կատարելու պարտականություն, որը համարվում է խախտված, երբ հաստատվում է փաստաբանի կողմից Կանոնագրքի որևէ դրույթի խախտման փաստը:

#### **Կարգապահական տույժի ընտրությունը**

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

**Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

**Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման

բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Գայանե Լյուդվիկյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով,

Խորհուրդը՝

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Գայանե Լյուդվիկյանին (արտոնագիր թիվ 1582) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.5 ենթակետի պահանջների խախտման համար:**

**2. Փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:**

**3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Սիմոն Բաբայան

**21 հուլիսի 2020թ.  
թիվ ԿԳ/69-Ա  
ք. Երևան**